

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ

ՄԵԼԿ

ՀԻՄՆԱԿԻՆԻ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 5 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Ստորագրութիւնը բաց է առաւօտեան 10—5 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Ցայտարարութիւնը ընդունվում է ամէն լիզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հերթական հարց — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մամուլ, թատրոն և երաժշտութիւն. եգիպտա-
հայ մամուլը. Նամակ. Ստորագրութեան. Նա-
մակ. Ստորագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱ-
ՔԻՆ. ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջ. — ՀԵ-
ՐԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՐՑ

Բանտարանի հարցը պայտօնական քնն-
նութեան առարկայ է դարձել բարձր կա-
ռավարչական շրջաններում:

«Մշակ» երէկվայ համարում գետեղ-
ված էր հեռագիր, որի մէջ յայտնված էր
թէ Պետերբուրգի բոլոր փողոցներում գե-
ներալ-նահանգապետի կարգադրութեամբ
կախված են եղել առանձին տպված յայ-
տարարութիւններ Բարձրագոյն հրամանի
մասին մի յատուկ յանձնաժողով կազմե-
լու, որպէս զի անյապաղ պարզվեն Պե-
տերբուրգի և նրա արուարձանների բան-
տներին դժգոհութիւնների պատճառները
և միջոցներ որոնվեն այդ պատճառները
վերացնելու: Բանտները իրար ետևից
կարգում են եղել այդ յայտարարութիւն-
ները, որոնք մի տեսակ հանգամանակ
աղբեղնութիւն էին գործում բանտների
վրա: Յունվարի 31-ին երեկոյան բոլոր
գործարաններում բանտները պէտք է
ընտրէին իրանց միջոց լիազօրներ յանձ-
նաժողովի համար:

Պայտօնական աղբիւրներից քաղված
այս տեղեկութիւնը ցոյց է տալիս, որ
բանտարանի հարցի քննութեան գործերը
պէտք է անմիջական իրադրութեան
շաւիղն ընկնեն: Կառավարութիւնը ցան-
կանում է հանգամանակ յուզված մտքերը
և հրաւիրում է բանտներին ներկայացու-
ցիւններին յայտնելու իրանց կարիքները և
պահանջները մասին:

Սակայն բանտարանի հարցի քննու-
թիւնը չէ սահմանափակվում միայն Պե-
տերբուրգի շրջանի բանտներին խնդր-
ներով. նա աւելի լայն ծրագիր ունի:
Ֆինանսների մինիստր Կոլոյցովը կազմել
է բանտարանի հարցի մասին մի գեկու-
ցագիր, որը նա ներկայացրել է մինիս-
տրների կոմիտէին: Այդ գեկուցագրի
մէջ մասնաւոր են արված թէ այն բա-
րեփոխութիւնները, որոնք անհրաժեշտ
են մերձաւոր ժամանակում իրագործու-
թիւն ստանալու և թէ այն յաջորդակա-
նութիւնը, որով պէտք է կատար անմիջա-
կանապէս բարեփոխութիւնները: Բարձ-
րագոյն կամքի համաձայն, գեկուցագրի
ընտրութիւնը մինիստրների կոմիտէում
պէտք է կատարվի փետրվարի 1-ին ոչ ուշ:

Այնպիսով բանտի վերաբերու-
թեամբ ֆինանսների մինիստրութեան մէջ
շուտով տեղի կունենան յատուկ նիստեր:
Այդ հարցի առիթով յաւաքված է բաւակա-
նաչափ նիւթ: Բանտի մասին պէտք է մաս-
նակցեն գնահատման մինիստրութիւնները և
գործարանների ներկայացուցիչներ և յայ-
տնի անտեսագէտներ: Բացի այդ խառնու-
թեան ժամերի խնդիրներից կը քննվեն
նաև բանտարանի կենցաղին վերաբերեալ
գնահատման հարցեր:

Աւելացրէք այդ բոլորին և բանտների
ապահովութեան հարցը, որի մասին մենք
տունել ենք տեղեկութիւններ իր ժամա-
նակին:

Հարցը հերթական է ճանաչվել և ստա-
ցել է կանոնաւոր քննութեան ընթացք:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ. Ս. Մ. Ա. Լ.

Ներքին գործերի մինիստր իշխան Սվե-
տոպոլկո-Միլոսկո հրաժարականը ամբողջ ուս-
ուց մամուլի քննութեան առարկայ դարձաւ:
«Մշակ» այդ ժամանակ չէր հրատարակվում.

բայց ի նկատի ունենալով, թէ իշխան Մի-
սկին ինչ խոշոր տեղ զբաղեցնում էր Ռուսաստանի
ներքին կենտրոնի ժամանակակից պատմութեան
մէջ, մենք կարեւոր ենք համարում, թէ և փոքր
ինչ ուշ, ծանօթացնել մեր ընթերցողներին ուս-
լրագիրներից մի քանիսի կարծիքների հետ:

«Русь» լրագիրը սկսում է նախկին մի-
նիստրի կառավարութեան բացատրական
կողմնակց. «Սվեպոլկո իր գործունէութիւնը,
հաւատ և վստահութիւն յայտնելով դէպի
հասարակական հիմնարկութիւնները, նա
այնուհետև պատասխանատու էր դառնում
գործադրած այն միջոցների մասին, որոնք
կատարելապէս նման էին Վ. Կ. Պլէկիի քա-
ղաքականութեան: Անցնալ տարվայ վեր-
ջում, օրինակ, տեղի ունեցաւ զեմստօր
ժողովների անհիմն յետաձգումը, մի բան,
որ չէր գործադրվում նոյն իսկ նախնիքաց
մինիստրի օրով: Փորձ արվեց պատժի են-
թարկելու Մոսկվայի քաղաքացիներին այն
գործողութեան համար, որ հասարակական
համակրանքի մի առաջին հոսանք առաջաց-
րեց, որ և մի փայլուն մեծամասնութիւն
կազմեց նրան նորից քաղաքացիութեւն
ընտրելու համար: Չէմոսովի մի շարք բոլոր-
վին պարզ ու որոշ յայտարարութիւնները
զրկելին մահուցի տակ և հնարաւորութիւն
չէր տրվեց, որ նրանք հրատարակվեն մա-
մուլի մէջ, որովհետև նորից վերահաստատ-
վեց ցեղեւորական կանոնների այն յօդու-
ածը, որ մինչև այդ չէր գործադրվում և որի
գործութեամբ զեմստօր ժողովների և քա-
ղաքային վարչութիւնների նիստերի հա-
շիւները ենթարկվում են նահանգապետնե-
րի և քաղաքացիների հանդէպ: Նու
այս ամօթխած կէս-ազատ հրապարակա-
նութեան քօրի տակ ծածկվեց մեր զեմստ-
օրների շրջանում տեղի ունեցող ահագին
ազատական շարժումը, այն շրջանի, որ ի
հարկէ, յանցագործ չէ և, ի հարկէ, արտա-
յայտում է ռուսաց լուսաւորված հասարա-
կութեան իսկական տրամադրութիւնը, իս-
կական անկեղծութիւններն ու կարիքները:
Սակայն լրագիրը ընդունում է, որ իշխան
Միլոսկին ծառայութեան ժամանակ էլ է մատուցել
երկրին Դանիցի գլխաւորն այն է, որ
մամուլին և հասարակական կարծիքի ար-
տաշատութիւններին տուած մի փոքր ա-
զատութեան շնորհիւ, ճնշման անհանգստ-
ութիւնը սկսեց դուրս գալ հրապարակ-
փոխակցութիւնը թէ այսպէս այլ ևս արեւել
չէ կարելի մտաւ ուսուց ամբողջ հասա-
րակութեան, նոյն իսկ մեր բերօգրաստիա-
կան շրջանների մէջ:

«Русскія Вѣд.» լրագիրը հետեւեալ տո-
ղերն է նուիրում. «Յանձն իշխան Սվե-
տոպոլկո-Միլոսկո թողնում է պետական առ-
պարկէզ մինիստր, որ արդէն իր առաջին
իսկ քայլերից կարողացաւ ձեռք բերել մի
ժողովրդականութիւն, որ Լօրիս Միլոսկոյից
յետոյ մի ուրիշը հազիւ թէ վայելած լինի:
Իշխան Սվետոպոլկո Միլոսկոն կառավարու-
թիւնը կարճատեւ էր և չէր կարողացաւ նշա-
նաւոր դառնալ ոչ բէթօրմներով, ոչ ժողո-
վրդական ուր և է կարելի կամ ձգտման
հաստատ բաւարարութիւն տալով. բայց նա
աչքի ընկնող տեղ կը բռնէ մեր հայրենիքի
քաղաքական զարգացման պատմութեան
մէջ: Նախկին մինիստրի մատուցած գլխա-
ւոր ծառայութիւնն այն է, որ նա կարողաց-
ցաւ կենդանացնել հասարակութիւնը և նը-
րան ներշնչել յոյսեր թէ մտնեալ է լա-
ւագոյն ժամանակ: Այն ամենը, ինչ ձեռք
բերեց ուսուց հասարակութիւնը նրա կա-
ռավարութեան չորս ամսվայ ընթացքում,
չէ կարող վճռական ազդեցութիւն չունենալ
մեր հայրենիքի ապագայ ճակատագրի վրա»:

«Наша Жизнь» լրագիրը համարում է
իշխան Սվետոպոլկո-Միլոսկո մինիստրու-
թիւնը նշանաւոր է այն կողմից, որ նրա
ժամանակ ռուսաց հասարակութիւնը ցոյց
տուեց քաղաքական հասունութեան այնպի-
սի մի աստիճան, որին նրա ինքնակա-
ններն ու ինքնաբաժնուները զուգէ և չէին
սպասում: Ռուսաց հասարակութիւնը պա-
հանջեց ներթափանց ապահովացում և երաշ-
խաւորութիւն: Հաւատ—շատ լաւ, բայց ոչ
թէ դատարար, ոչ մի պարտաւորութիւն չէ
զնուց հաւատ: Այս կէտում ուսուց հաս-
րակութիւնը արտայայտեց իր միտքը միա-
բան և շատ պարզ կերպով: Մեր տեսակէ-
տով, իշխան Սվետոպոլկո-Միլոսկոն գլխա-
ւոր ծառայութիւնը հէնց այն է, որ նա
կարողութիւն տուեց պարզելու մի անգա-
մից ընդլնիշտ բոլոր թիւերիմացութիւնները.
և թիւերիմացութիւնները ոչ միայն ոչնչա-
ցան, այլ ոչնչացաւ և նրանց նորից ծագելու
հնարաւորութիւնը:

«Новости» լրագիրն ասում է. «Իշխանը
չէր կարողացաւ անցկացնել ոչ մի բէթօրմ,
չէր կարողացաւ ոչ մի խոշոր քայլ անել:
Նրա ամբողջ պատմական նշանակութիւնը
ժամանակին արտապահած նրա խօսքն է:
Բայց ինչու ևս ժամանակներ, երբ խօսքը
անհամեմատ աւելի մեծ նշանակութիւն ու-
նի, քանի տասնակ թէթօրմներ... Բիւրո-
կրատիական մամուլի տակ ճնշված ուս-
հասարակութիւնը մար, բիւրոկրատիական
ունեցող թէթօրմների չէր կարող հասարա-
կութեան հարկաւոր էր հաւատ, թէ ամեն
ինչ կը փոխվի կենսաւրի մէջ, թէ «թարմ
օդ» կը բուրէ նրա համար: Հասարակու-
թիւնը սպասում էր: Նու մինիստրը, ներքին
քաղաքականութեան գլուխը խօսեց այդ «օ-
դի» մասին: Դա բաւական էր. գործը կա-
տարված էր»:

«Наша Жизнь» լրագիրը. «Մենք կարծում
ենք, որ հրաժարված մինիստրի «սխառմի»
արժանաւոր և առաջին սխալը սխառմի
բացակայութիւնն է: Իշխան Սվետոպոլկո-
Միլոսկին անցաւ մինիստրութեան գլուխ
առանց որոշ ծրագրի: Մինիստրութեան
գլուխ անցնելով, իշխան Սվետոպոլկո-Մի-
սկին չէր գիտէր թէ ինչ է նրան սպասում
ապագայում և ինչ է նրանից սպասում ա-
պագան: Նա կարծում էր թէ զբարութեամբ
շատ բան կարելի է անել: Նա մոռացաւ,
որ ինչում են ժամանակներ, երբ բարու-
թիւնը նոյնքան անգոր է, որքան և խն-
տութիւնը»:

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

(Տիկին Վարդուհէ յօրերանը.— «Պաշտպան» պիեսը
հայկական բեմի վրա.— Գարա-Մուրադի համերգը.—
Պաշտպանի գաղափարները.— Մոցարտ և Սալերիոն:

I
Այսօր, հինգշաբթի, փետրվարի 3-ին, Թիֆ-
լիսի արտիստական թատրոնում տեղի կունե-
նայ մի ներկայացում դերասանուհի Վարդու-
հէ պատւին նրա բեմական գործունէութեան
25-ամեակի առիթով:

Տիկին Վարդուհէ նշանաւոր է տեղական
կենսաբան վերջած, օրինակ Գ. Սունդուկեան-
ցի պիեսներով: Վարդուհէն այնքան լաւ ու-
սումնասիրել և ներկայացրել է մի քանի տի-
պեր, որ նա դարձել է կյանքական որոշ դե-
բերում և նրանից են ընթերցանակում միւսները
նոյն դերերը կատարելու:

Ցանկալի է, որ մեր հասարակութիւնը պա-
տուէր արժանաւոր բեմական գործիչին, որը
մինչև այժմ անխնայ աշխատում է հայկական
բեմի վրա:

II

«Պաշտպան» պիեսի ներկայացումը գրաւել
էր բաւական մեծ բազմութիւն երկուշաբթի,
յունվարի 17-ին, դէպի Արտիստական ընկե-
րութեան թատրոն: Այդ ներկայացումը ընդ-
հանրապէս աջողվածներից մէկը կարելի է
համարել անսամբլի կողմից, թէ և առանձին
ոյժերի մէջ կայ ն թողյորը և անբաւարա-
րները:

«Պաշտպան» պիեսը թարգմանական է և
պատկանում է Տիմոֆեյեւի գրչին: Նրա ըն-
վանդակութիւնը ամփոփ կերպով հետեւեալն է.
Փաստաբան Միխայիլ (Արեւիկան) պաշտպա-
նում է որբերի մի արդար դատ, որը մի և
նոյն ժամանակ շողաւոր է և իր կնոջ ու
զորանչի շահերը: Նա գիտէ, որ օգնելով որ-
բերի արդար դատին՝ նա հարուած պէտք է
հասցնէ իր կնոջ և ազգականները դարձական
շահերին, բայց և այնպէս նա առանց տա-
պաւիլելու և կողմնակի մասնաւոր հաշիւների
առաջ է տանում գործը: Նրա կին Երեման
(Մայստրան) սկզբում դիմադրում է ամուս-
նուն, բայց յետոյ համոզվում է, որ պէտք է
ընդունէ զոհը թէ ի՞նչ սիրած մարդու սկսած
գործը պատուով վերջացնելու և թէ իսկապէս
բարոյական մի պարտաւորութիւն կատարելու
համար: Սակայն երբ որբերին ապահովող
կտակը ընկնում է Երեմայի ձեռքը, Երեման
մի բարդ յուզմունքի մէջ է ընկնում. նա ըզ-
գուծ է, որ իր ձեռքին է մի ճակատագրական
թուղթ, որ շատ կարեւոր է նրա ամուսնու
համար, բայց մի և նոյն ժամանակ նա իրան
վերաւորված է զգում, որ ամուսինը այնքան
անձնուէր կերպով իր բոլոր ուշք ու միտքը
դրացնում է որոշ գոյն և արտայայտութիւն:

Նուրիել է որբերին. նա զգուշացնում է և այն
բանից, որ ամուսինը ցոյց է տալիս անհան-
գստութիւն քանի որ թուղթը կնոջ ձեռքին է:
Քանիդատութեան, ինքնասիրութեան, շղայնու-
թեան և ով գիտէ գուցէ նոյն իսկ իր շրջա-
պատող միջոցների հիպոթիզ ակնկալութեան
տակ՝ Երեման այնքան գրգռված է և իրան
կորցնում է, որ պատուում է կտակը և ոչնչաց-
նում: Բայց «ոճիւր» գործելու հէնց առաջին
վայրկեանից նա սկսում է զգալ, թէ ինչ է
նա արել, ինչ սոսկալի հարուած է հասցրել
իր ամուսնուն: Նրա մայրը և ազգականները
նրան գովում և բաշտելու են, բայց ամու-
սինը թողնում է կնոջը և հեռանում, որոնցով
միջոցներ պաշտպանելու որբերի դատը: Վերջ
ի վերջոյ արդարութիւնը տանում է իր յաղ-
թութիւնը: Դատաւարի օրը Երեման ինքը
յանկարծ յայտնում է դատարանում, որ ինքն
է պատուել կտակը:

Տիկին Մայստրան, որ կատարում է Երե-
մայի դերը, լուրջ աշխատանք էր գործ դրել
ուսումնասիրելու և ամբողջացնելու Երեմայի
տիպը: Նա ունեցաւ մեծ աջողութիւն և ար-
ժանացաւ բուն ծախսարկութիւնների: Երե-
մայի դերը կարող է տիկին Մայստրանի
բեկերտութեան լաւագոյն դերերից մէկը հա-
մարվել: Թէ և կտակը պատուելու տեսարա-
նում նա ցոյց տուեց բարդ խաղ և գործեց
մեծ տպաւորութիւն, մենք այնու ամենայն
կը ցանկանայինք, որ այդ տեսարանի առա-
ջին վայրկեանները հոգեբանական աւելի ման-
րամասն մշակութեան ենթարկվէին: Երեմայի
և նրա ամուսնու մէջ քաղաքական ծագած ան-
վստահութեան զգացմունքը պէտք է ըզլէ և
զարկ ստանայ Երեմայի անսովոր յուզմունքից
և շարժումներից, մինչդեռ յունվարի 17-ի
ներկայացման ժամանակ այդ տեղը թող կեր-
պով արտայայտվեց և հանդիսականների հա-
մար փոքր ինչ անբնական երևաց Միխայիլի
անվստահութիւնը դէպի իր կնոյն: Բացի այդ՝
Երեման, կտակը իր ձեռքին խաղացնելիս,
պէտք է զգուշական ոչ մի գիծ չը թող տայ
գործածելու, որովհետև կարող է տեսարանը
ծիծաղ կամ ժպիտ յարուցանել. դա չափազանց
խոր դրամատիկական և ողբերգական մի քայլ
է, որ կազմում է պիեսի ամենաուժեղ կտոր-
ներից մէկը:

Արեւիկան՝ Միխայիլի դերում՝ ըմբռնել էր
պիեսի հերոսի տիպը և ներկայացրեց հաստատ
բարոյական սկզբունքների տէր և մի և նոյն
ժամանակ սիրող մի անձնաւորութիւն. բայց
չէր տուել դերին այն ուժեղ արտայայտու-
թիւնը, որին նա կարօտ է: Արեւիկան կարող է
այդ դերը աւելի լաւ խաղալ:

Օհանեսան կատարում էր Մուրիսովի դերը:
Մուրիսովը Միխայիլի հակապատկերն է. մի
մարդ, որ խղճի հետ շատ հեշտութեամբ սա-
կարկութիւններ է անում և որի նշանաբանն է
«աշուղթութիւն», ինչ բարոյական գնով էլ նա
ձեռք բերված լինի: Օհանեսան բաւական լաւ
կատարեց Մուրիսովի դերը: Օհանեսան այս
անգամ խուսափում էր զեկլամպոյայից և խօ-
սում էր բնական կերպով: Նա խաղում էր ոչ
միայն այն ժամանակ, երբ միայն ինքն էր
խօսում, այլ և ուրիշների խօսակցութեան մի-
ջոցին: Նրա դերի վերջին կտորը, որտեղ նա
վերաւորում է Երեմային, լաւ չէր մշակված.
այդտեղ Մուրիսովի նուրբ ձեռքը և կոպիտ
վերաւորանքը պէտք է համապատասխանէին
Մուրիսովի տիպին:

Տիկին Ջարեշ Երեմայի մօր դերում՝ աշխա-
տանք էր գործ դրել և ընդհանրապէս վատ չը
խաղաց, բայց նա տիպը ըմբռնել էր թերի
կերպով: Երեմայի մայրը, ճարպիկութեան,
կամքի, ճկունութեան մի ներկայացուցիչ է.
իսկ տիկին Ջարեշ ներկայացնում է նրան ին-
քե և մի գրկվածի: Օր. Աղամբան պէտք է աւելի
ուժեղ կերպով սրտայայտէր այն տեսարանը,
որտեղ Միխայիլը յայտնում է նրան, որ
կտակը կորցրել է կամ ոչնչացրել է:

Մամիկոնեան իր փոքրիկ դերում բնորոշ էր
և աջող: Ջարեշեան բժշկի դերին չէր կարո-
ւանձնուէր կերպով իր բոլոր ուշք և արտայայտութիւն:

Տիկին Աննա Գրիգորյանը էր անհամապատասխան դեր, նորից էլ և Անգրանիկ:

«Պաշտպան» պիեսը հետաքրքրութիւն չար- ժեց հանդիսակալների մէջ: Նրա մէջ ուժեղ է դրամատիկական տարրը: Նրա պակասութիւնն է ձգձգված լինելը:

III

Շարաթ օր, յունվարի 15-ին, Արաբսեանի թատրոնում, պ. Կարա-Մուրզայի երգեցիկ խումբը տուեց մի համերգ, որ գրաւել էր մեծ բազմութիւն դէպի թատրոն: Հանդիսականներ- ըր շրջանում կային մի քանի օտարազգիներ, որոնց թւում Պետերբուրգից եկած մի հիւր:

Համերգը մեծ հաւանութիւն գտաւ: Մանա- ւանդ աշտուղութիւն ունեցան ժողովրդական պարերգերը: Թէ եղանակները և թէ պարերը ապաւորութիւն էին գործում հանդիսականնե- ըր վրա: Հասարակութիւնից շատերը դիմեցին պ. Կարա Մուրզային խնդրելով կրկին իր համերգը հաւաքարի թատրոնում:

IV

Երգչուհի Պապայեան սկսեց նորից մասնակ- ցել Թիֆլիսի արքունական թատրոնի ներկա- յացումներին: Նա հանդես եկաւ «Բոմբ» և «Ջու- լիետտա», «Փառաւոր» և «Բոհեմա» օպերանե- րում:

Արքունական թատրոնը տուեց մի նոր օպե- րա, այն է «Մօցարտ և Սալերի», որ հե- ղինակել է Ռիմսկի-Կորսակով: Դա իսկապէս օպերա չէ, այլ երկու տեսարան, որոնք աշո- ղութիւն կարող են ունենալ երբ չափազանց լաւ են կատարվում, որովհետեւ պէտք է ցոյց տալ այն դիմելի աղբյուրութիւնը, որով Մօ- ցարտ հմայիչ տաղաւորութիւն էր գործում իր վերին աստիճանի նուրբ գեղարուեստով: Կա- տարվում արքունական թատրոնի բեմի վրա միջակ էր:

Յամենայն դէպս՝ պէտք է արձանագրենք Դոնիկոյի մի արժանատւութիւնը, որ այս տարի նա ծանօթացրեց Թիֆլիսցիներին մի քանի նոր օպերաների հետ և իր բնականու- ըր մէջ ունի դարձեալ մի քանի նորութիւն- ներ:

ԵԿԻՊՏԱՆԻ ՄԱՄՈՒԼԸ

III

Ձեռքի տակ ունենք երեք եգիպտահայ պար- բերական հրատարակութիւն — «Լուսաբեր», «Հօրիզոն», «Սիւսուան»: Բոլորն էլ նորածին հրատարակութիւններ: Առաջինը՝ շաբաթը ե- րեք անգամ լոյս տեսնող լրագիր, երկրորդը՝ շաբաթաթերթ, երրորդը՝ ամսագիր:

Դուռը է, ի հարկէ, փոքր ի շատէ ճիշդ գուշակութիւններ անել նորածինների մասին. սրբան նրանք կենսունակ, երկարակեաց կը լինեն, ինչ կանխ իրանց կեանքի ընթացքում: Բայց իւրաքանչիւր նորածին հէց առաջին օրից իր հետ աշխատէ է բերում մի որոշ կեդ- պա անք, առողջական մի յայտնի դրութիւն: Վատառողջութիւնը դեռ վերահաս մահվան նշան չէ: Ապրում են և թոյլ՝ վոյտ, օր-պա- կաս օրգանիքները: Բայց այդ ապրուստը հազիւ թէ կարողութիւն ստանայ այն աս- պարէզում, ուր գործը, յաղթանակը պատկա- նում է տաղանդին, իսկ թէ սա չը կայ՝ ե- ոանդին, տոկոսն ու յամառ աշխատանքին:

Մեր երեք նորածինների ընդհանուր կեր- պարանքը այժմից իսկ հասկացնել է տալիս, որ գրանցից ոչ մէջ չը պիտի կարողանայ հա- մապատասխանել այն նշանակութեան, որ ու- նի յատկապէս մեզ համար ազատ մասն է և որի մասին խօսեցինք մեր յախճաթայ յօ- գումարում:

«Լուսաբերը» մի փոքրիկ թերթ է, որ ու- գում է պահպանել մի գրական-քաղաքական լրագրի բոլոր բաժինները: Ընթերցանութեան նիւթ շատ չը կայ նրա մէջ: Մանք աչքի անց- կացքինք այդ լրագրի երեք թէ չորս համա- րները և համազօյցինք, որ նշողսի ափերում դա մի նոր, աչքի ընկնող երևոյթ ներկայաց- նելուց շատ հետո է: Հայկական ինքնուրոյն բաժնի մէջ մենք կարգադրեցինք մի հատ նամակ Կ. Պոլսից, որ դեռ թղթակցի առաջաբանն է և մի յօդուած Երուսաղէմի հայոց վանքի գը- րութեան մասին, որ, տարաբախտ բար, դար- ձեալ առաջաբանի ձև ունի: Խնդրական մի հատ առաջնորդող տեսանք, որ խօսում է ե- կեղեցիների գանձանակները վերացնելու և հոգևորականների դրութիւնը ապահովելու հիւ, քաջընկ հարցի մասին:

Թիւրքական Հայաստանից ոչ մի ինքնու- ըրոյն, սեփական տեսութիւն: Ինչ որ կայ այդ բաժնում, թարգմանութիւն է եւրօպական լը- բագիրներից: «Կրիկիկոյ ս. Կրիկիկոյի» և «Կրիկիկոյի» խոշոր, շատ խոշոր տառերով

շարված վերնագրի տակ մի արտատպութիւն Կ. Պոլսի «Արեւիք» լրագրից: Առհասարակ խմբագրութիւնը, ինչպէս երևում է, աստիճ- նեղված է իր թերթի մեծութիւնից, նեղված այն տարով, որ չը գիտէ ինչով լցնէ իր չորս էջերը: Յայտարարութիւններն ու բօրային տեղեկատուները երբեք երեսի կէսից են սկսվում, յօդուածները տպվում են խոշոր տառերով, այնպէս որ լրագրի իւրաքանչիւր բաժինը միմիայն չափ ունի: Մեծ յոյս է դնվում «Այլ և այլ» բաժնի վրա, ուր «Միախոտի» պատմութիւնը անուշով մի յօդուած անար- դար կերպով աւելի մեծ տեղ է բռնում, քան տեղական «ազգային» լուրերի բաժինն անգամ:

Աւելի եռանդուն է երևում «Հօրիզոն» շա- րաթաթերթը: Ազատ մամուլի յատկանիշները այդտեղ աւելի յաճախ են երևան գալիս: Խմբագրութիւնն ունի քննադատական կարո- ղութիւն: Արտաքին քաղաքականութեան մէջ երկացող ուղղութիւնը անպայման համակրելի է: Պէտք է գուշակել, որ տեղական հարցերի վերաբերմամբ էլ նոյն քննադատական ուղ- ղութիւնը նախապատիւ կը համարվի և այն ժամանակ «Հօրիզոնը» կը դառնայ ընդդէմա- ղիւր մի օրգան, որ Եգիպտոսի հայութեան մէջ տիրող աղայականութեան համար կը լինի մի փրկարար խորագիր:

Սակայն «Հօրիզոն» էլ սակաւարիւնութեան նշաններ չառ ունի: Փոքրիկ դիրք, որի հե- տեանք՝ բովանդակութեան աղքատութիւնը թւում է, որ եթէ խմբագրութիւնը նիւթական միջոցներ ունենայ, կարող է աշտուղութեամբ մրցել այդ սակաւարիւնութեան դէմ: Կրկն- նում ենք, արտասահմանեան հայ մամուլի մէջ կարևոր դերը միմիայն ազատական յօդուած- ների թարգմանութիւնները, վերացական դա- տողութիւնները չը պիտի լինեն: Դրանք ինքն ըստ ինքեան: Դիւսար դերը, այն, որ կարող է անուշ ու հեղինակութիւն ստեղծել, որ կա- րող է իրապէս մեծ ծառայութիւն մատուցա- նել, մեր իրականութեան բազմակողմանի, համարձակ ուսուցանասիրութիւնն է: «Հօրիզո- նը» դեռ չունի այս դերի յատկութիւնները: Բայց կունենայ: Դժուար գործ է, պէտք է մեծ կազմակերպչութիւն, պէտք է ձեռնհաս ոյժերի համախմբում: Իսկ եգիպտահայ թեր- թերի խմբագրութիւնները երկու-երեք հո- գուց են բաղկացած...

«Սիւսուան» ամսագիրը, ինչպէս թէլագրում է այդ անունը, պիտի յատկապէս նուիրված լինէր Կրիկիկոյին: Բայց առաջին համարի մէջ մենք միայն մի յօդուած տեսանք, որ Ձե- յթուի մի հին դէպքն է նկարագրում և որի պատմողն է Ձեյթունի անցեալի և ներկա- յէն» հետաքրքրական գրքի հեղինակը: Իրա- կան, առօրեայ կեանքից ոչինչ չը կայ ամ- սագրի մէջ: Գրական մի ժողովածու է փոք- րիկ դերով, այդ ժողովածուի գրական ար- ժանատւութիւնները այնքան քիչ են, որ ան- կարելի է երկար կանգ առնել նրա վրա:

Մեզ վրա փոքր ի շատէ լաւ տպաւորու- թիւն թողեց «Այգեկուծը» մը՝ փոքրիկ նկա- րագրութիւնը, ուր հայրենի յիշատակների անարուեստ վերակենդանացումը տեսանք: Թիւրքաց գրողների հիմնական պակասութիւնն այն է, որ նրանք չեն կարողանում պարզ ու հասարակ, ամենքին մատչելի, ձիւտ լեզուով գրել: Նրանք երգում են, կենքի մամին աս- պարէզներում վերամբարձ, քերթողական ոճի են հետևում: Այդ պատճառով էլ մշուշապատ են նրանց գրութեանը: Դեկլարատիւնները կարծես նրանց համար է ստեղծվել: «Սիւսուա- նի» մէջ կան «մօղեռնականութեան» մի քանի փունջներ: Գուցէ հետաքրքրական լինի եգիպ- տահայերի պատմութիւնը, որի առաջաբանը միայն մենք տեսանք առաջին համարի մէջ:

Դժուար թէ «Սիւսուանը» կենսունակութեան իրաւունքներ ունենայ: Դա նոյն այն «Փիւ- նիկն» է, որ տարիներ համար է հրատարակվում էր Եգիպտոսում, հրատարակվում էր անկա- տելի միայնով...

Այսպէս ահա՝ երեք նորածինները, առան- ձին առանձին վերցրած, բաւական վտիտ, սակաւարիւն: Ի՞նչ պէտք է լինեն նրանք: Արդեօք միայն միաւորնե՞ր, որոնք պիտի ա- լելայեն Նեզոսի ափերում սունկի արագու- թեամբ բռնող պարբերականների գումարը: Շատ և շատ հաւանական է: Մեզ խոստանում են նոր և նոր հրատարակութիւններ: Բայց եղածներն էլ բաւական են, որ իմանանք, թէ ինչ կը լինեն խոստացվածները:

Միթէ, ճշմարիտ, Թիւրքահայ երիտասար- ղութիւնը ազատ երկիրներում իր հիմնած մամուլով պիտի միայն իր անկարողութիւնը ցոյց տայ: Այս մի շատ ցաւալի փաստ կը լինէր: Եւ այդ յուսահատեցնող ցաւի դէմ,

մեր կարծիքով, միակ միջոց եթէ կայ, դա այն պիտի լինի, որ Թիւրքերի քաղաքական չը շատացնեն, տպագրական խօսքը անշատ, անպատրաստ ոյժերով չը տապալեն, արհա- մարելի չը դարձնեն: Այլ միանաւ, ստեղծեն մի լուրջ ու հիմնաւոր կազմակերպութիւն և հասկանան, թէ ինչ իրական, կարևոր պա- նաններ են դրված գրող դասակարգի առաջ: Անունների բազմութիւնը ջնջեցէ՛ք: Թող աղ- քատ լինի ձեր պարբերական հրատարակու- թիւնների ցուցակը: Բայց տուէ՛ք օրինաւոր, լուրջ, կենդանի գործ:

Գոնէ մի հատը, բայց լաւ...

Լ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, փետրվարի 1-ին

Եկատերինօղարցի մի պարոն, որը չէ ուղղւո իր անունը յայտնել, անցեալ ամսին փոխադ- րել էր 10 բուլը, խնդրելով գրպանի «Լոյս» օրացոյցներ ուղարկել եւրօպական Ռուսաս- տանի գանազան քաղաքներում գտնվող հայ զինուորներին: Այդ մասին յայտնելով ի դի- տութիւն ընթերցողների, խնդրում եմ հասցէ- ներ հաղորդել: Ցանկալի է, որ մի և նոյն գո- րազնդում ծառայող զինուորները մի ընդհա- նուր հասցէ տան, որպէս զի աւելորդ ճանա- պարհածախս չը լինի:

Ե. Թովքեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, փետրվարի 2-ին

Ներկայ տարվայ յունվարի 2-ին կայանա- լով ինձ ձեռ, Հաւաքարում, Տնտեսա փոքրիկ հանդէսով այնտեղի չքաւոր երիտաների հա- մար, պարտք եմ համարում յայտնել շը- նորհակալութիւնս պ. պ. Կ. Արաբսեանին և Մ. Լուչանյանին, որոնք իրանց սուղ ժա- մանակ չը խնայեցին երեխաներին սովո- րեցնելու առաջինը երեքի և պարբեր, իսկ երկրորդը մանկական ներկայացումն պատ- րաստելու և թէ այն յարգելի տիկիներին և օրիորդներին, որոնք աշակցեցին գործին թէ նուէրներով և թէ գործով, ուրախութիւն պատճառելով քաղաքից կտրված Հաւաքարի, բազմաթիւ չքաւոր անմեղ սրտերին:

Ն. Թայրեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Յունվարի 25-ին Միխայիլների Կոմիտէի նիստը դադարեց 1904 թիւ դեկտեմբերի 12-ի Բարձրագոյն ուկադի 6-դ կէտով, որ վերա- բերվում է կրօնական համբարտարութեան: Ներքին գործերի միւնիստր Ն. Ա. Դուրնօվն նկարագրեց հնադարեւներին իբր լաւ ուսման, իրանց հայրենիքը սիրող և շատ կանոնաւոր անձեր: Միխայիլների Կոմիտէան այդ բանի հետ համաձայն լինելով, որոշում կայացրեց արգելել նրանց դէմ հաւաքանքը, որ առանց այն էլ օրինական ոչ մի հիմք չունի. բացի դրանց՝ որոշեց եղած հաւաքող օրէնքը ոչնչ- չացնել: Նիստին ներկայ եղող միտրօպօլիտ Անտօնի ստիպողաբար խնդրեց, որ ուղղա- փառ հոգևորականներին ազատեն հաղանդ- ների վարժունքները լրտեսելու և պաշտօնա- կան տեղերին յայտնելու պարտականութիւ- նից: Մենատօր Սարգիսը, որ բռնում էր ս. Միխայիլ աւագ-պրօփոր Պրեկօմիսցեվի տե- ղը, նոյնպէս կողմնակից հանդիսացաւ լրակա- տար համբարտարութեան: Այդպիսով կօ- միտէտը որոշեց տալ լրակատար համբար- տարութեան սկզբունքն իբր ուղեցոյց այն յատուկ յանձնաժողովին, որ կազմվելու է հնադարեւների վիճակը բարելաւելու առիթով: Իսկ օտարաբանի և այլակրօն անձերի իրա- տունքները մասին եղած օրէնքների վերա- ըննութեամբ որոշեց զբաղվել միխայիլների Կոմիտէի մօտակա նիստերից մէկում: Մտա- գրութիւն կայ այդ նիստին հրաւիրել այլա- դաւան եկեղեցիների հոգևորականներին խոր- հրդակցութեան:

«Ք. Ա.»-ը հաղորդում է, որ մամուլի մա- սին եղած օրէնքները վերաքննելու ժամանակ մտադրութիւն կայ ոչնչացնելու գաւառական հրատարակութիւնների վրայից ցնցուրան, ոչնչացնել նոյնպէս վարչական ցնցուրան, որ վերաբերում է քաղաքային գումաների, զեմսովաների և այլ հաստատութիւնների հա- շիւնների հրատարակութեանը: Մտադրութիւն կայ նոյնպէս ցնցուրական վարչութիւնը ա- ռանձնացնել և դարձնել առանձին հիմնարկու- թիւն, դուրս բերել միխայիլներից: Բացի դրանից՝ մտադրութիւն կայ մամուլի օրէնք- ների դէմ գործված բոլոր յանցանքների հա- մար յանցագործներին ենթարկել դատի:

«Изв. С.-Пет. Епархи» թերթում յունվարի

20-ին, պաշտօնական բաժնում, տպագրված է է. «Պետերբուրգի փոխարքայական բանտի բա- հանայ Գէօրգի Գապօն արձակված է բան- տային քանոնային պաշտօնից, արգելելով նրան պաշտօնավարել մինչև այն ժամանակ, երբ կը պարզվի վերջնականապէս նրա մասնակ- ցութիւնը և գործողութիւնները բանտրների վերջին շարժումները և գործադուրի մէջ այս տարվայ յունվարի 6—12-ին»:

Պետերբուրգի տեխնիկական դպրոցի «Վասի- լիսկի Օստրով» քաղաքամասում եղած ստո- րաբաժանման մէջ դասերը դեռ ևս չեն վեր- սկսվել, որովհետեւ դպրոցի շէնքի մի մասը դեռ ևս բռնված է գործերով: (P. B.)

Մի քանի ուսանողի նախաձեռնութեամբ Թիֆլիսում մտադրութիւն կայ բաց անկու- «Русское Собрание» ընկերութեան մասնաճիւղ: Մասնաճիւղի կանոնադրութեան ծրագիրն ար- դէն մշակված է և Պետերբուրգ ուղարկված հաստատվելու: Նախաձեռնողների թիւը 25 հոգի է:

Պետերբուրգում, Նօբէլի քնակարանում, հա- զորդում է P. B. լրագրողը, կայացաւ գործա- րանատեղերի ժողով, ուր ըննութեան առաւ Պետերբուրգի գործարանների այն վիճակը, որի մէջ ընկել են նրանք վերջին օրերս: Գըն- նութեան նիւթ դարձաւ նաև ֆինանսների մի- նիստին այն դիմումը, որով առաջարկվում էր գործարանատեղերին միջոցներ ձեռք առնել բանտարական հարցը լուծելու համար:

Յունվարի 27-ին Պետերբուրգում կայացել է բոլոր մասնագիտութեան ինժեներների ըն- կերութեան ընդհանուր ժողովը, որին ներկայ էր անագին հասարակութիւն—ուսանողներ, գրականագէտներ, գեղարուեստագէտներ և այլն: Որովհետեւ հասարակութիւնը խիստ մեծ էր, ուստի կանոնադրութիւնը չէր ուղղւո թոյլատրել նիս- տը և միայն ժողովի նախագահի՝ լեւոնային ինստիտուտի տեսուչ Լուսուգինի շնորհով նստը եղաւ ժողովը բացանի. նա երաշխաւո- րեց ուստի կանոնադրութեանը, որ հասարակութեան մէջ ոչ մի միջնադէպ տեղի չի ունենայ—նա- խագահը մատնանի աբեց, որ ուսու մամուլի լրագրոյն մասի և մասնաւորապէս «Наши Дни» լրագրի շնորհով քիչ ու շատ պարզեց Պետե- րբուրգում վերջին օրերի վիճակը: Մամուլի միւս մասի վերաբերմունքը վերջին դէպքերին անարժան էր: Ժողովի անդամներից մի քա- նիսն առաջարկեցին ընդհանուր մի շատ տա- րածված լրագրի հետ իրանց բոլոր յարաբե- րութիւնները, բայց ժողովը գտաւ, որ դա նախարար է, այլ միայն կարելի է մասնաւոր կերպով աչքի առնել ունենալ այդ—Ժողովին զեկուցվեց, որ 198 հոգի ինժեներներ, բան- տար դասակարգին շատ մտ կանգնած, մի յայտագիր ներկայացրին ֆինանսների մի- նիստին, որ հաւանութիւն տուեց առաջին մասին (տեստեսական պայմաններ), իսկ ինչ վերաբերում է յայտագրի երկրորդ մասին (քաղաքական պայմաններ),—նա յայտեց, որ կը ներկայացնէ Բարձր իշխանութեան ըննու- թեանը: Նիստում ընկնեց նոյնպէս Պուտիլովի գործարանի կառավարիչ ինժեներ Սմիլնովի վարժունքը դէպի բանտրները և նրա բռնած գիրքը վերջին դէպքերի ժամանակ: Ժողովը որոշեց յայտնել նրան իր յանդիմանութիւնը: Իսկ ինչ վերաբերում է Սմիլնովի միւս արարեւե- րին, որ անվայել են մասնագէտին և նրա կո- չումին, այդ առիթով ժողովը կայացրած որո- շումը յանդիմանութիւնից շատ աւելի խիստ էր: Ժողովը որոշեց ընկերութեան բերօքին յանձ- նել ճշգրիտ տեղեկութիւններ հաւաքել գոր- ծարանական և արդիւնաբերական գործում գործադուրների մասին և պարզել գործարա- նատեղերի վերաբերմունքը դէպի բանտր- ները: (P. B.)

ԼՈՒԳԱՆՍԿԻՑ մեզ գրում են. «Քաղա- բում բացի հայ լուսաւորչականներից, կան նաև հայ կաթօլիկներ, թւով 300 հոգի: Նրանք ունեն վարդապետ ուղարկված Ս. Ղազա- րի վանքից, որ հովվում է յիշեալ ժողովուրդը: ունենալով սեփական աղօթատուն, նրանք դիմել են տեղին լեւոնայիններից երեկի անձ- նաւորութիւններին, որ թոյլ տան իրանց ա- ղօթատունը Մանդեան տունին հայրենյա պա- տարագ մատուցանելու: Բայց մերժումն են ստանում»:

ՂԱԼԱ-ՂԵԼԱՂ գեղից (Չանգիզուրի գաւառ) մեզ գրում են յունվարի 17-ից. «Մի քանի օր տեղը ցրտերից յետոյ, այսօր, ամսին 17-ին,

